# Շախմատային Հայաստան

ՀԱՏՈՒԿ ԹՈՂԱՐԿՈՒՄ №11

№48(367)

ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1999


# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ 59-ՐԴ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՒՄԲ

## *Կարեն Ասրյանը՝ Հայաստանի չեմպիոն*



### ՇԱԽՄԱՏԱՍԵՐ ԲԱՐԵԿԱՄ

Եզրափակվեց Հայաստանի 1999 թվականի առաջնության բարձրագույն խմբի մրցաշարը, որը իրադարձությունների սրընթաց փոփոխություններով, մեկը մյուսին հաջորդող անակնկալներով, պատանի շախմատիստների բուռն առաջընթացով երկար կմնա շախմատասերների հիշողության մեջ:

Մինչեւ վերջին պահը ոսկե մեդալին հավակնում էին մեր երկու ուժեղագույն պատանի շախմատիստները՝ Կարեն Ասրյանը եւ Լեւոն Արոնյանը: Եզրափակիչ տուրում տարած գեղեցիկ հաղթանակով Ասրյանը միավորներով հասավ իր գլխավոր մրցակցին եւ, շնորհիվ ավելի բարձր լրացուցիչ ցուցանիշների, հռչակվեց մրցաշարի հաղթող:

Շնորհավորում ենք 19-ամյա Կարեն Ասրյանին՝ առաջին անգամ Հայաստանի չեմպիոնի տիտղոսը նվաճելու համար եւ մաղթում, որ նա մի քանի տասնամյակ արժանիորեն պաշտպանի մեր երկրի մարզական պատիվը:

Ամենաջերմ գովասանքի է արժանի նաեւ Լեւոն Արոնյանը: Եվ ոչ միայն այն կապակցությամբ, որ նա բաժանեց առաջին-երկրորդ տեղերը եւ արժանացավ արծաթե պարգեւի: 17-ամյա պատանին երրորդ անգամ լրացրեց գրոսմայստերի նորման եւ այժմ միայն պետք է սպասի ՖԻԴԵ-ի կոնգրեսի համապատասխան որոշմանը:

Երկար ժամանակ մոտ էր չեմպիոնի կոչմանը նաեւ Արտաշես Մինասյանը, եւ նա, հավանաբար, այնքան էլ գոհ չէ իր արդյունքից: Բայց Հայաստանի առաջնությունները այժմ այնպիսի մակարդակի են հասել, որ ցանկացած գրոսմայստերի համար բրոնզե մեդալը չի կարող դիտարկվել որպես վատ արդյունք:

Կանոնադրության համաձայն, առաջին հնգյակում տեղ զբաղեցրած մասնակիցները իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի հոբելյանական, 60-րդ առաջնության բարձրագույն խմբի մրցաշարին: Հատուկ գովասանքի է արժանի 16-ամյա Սարգսյանը, որին մի քանի սենսացիոն հաղթանակների համար արժե «առաջատարների սարսափ» անվանել:

| №№ | Մասնակիցներ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | Մ | Տ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆ | | 1/2 | 0 | 1/2 | 1/2 | 1 | 1 | 1 | 1/2 | 1 | 1/2 | 1 | 7,5 | 1 |
| 2 | ԼԵՎՈՆ ԱՐՈՆՅԱՆ | 1/2 | | 1 | 1 | 0 | 1/2 | 1 | 1 | 1/2 | 0 | 1 | 1 | 7,5 | 2 |
| 3 | ԱՐՏԱՇԵՍ ՄԻՆԱՍՅԱՆ | 1 | 0 | | 0 | 0 | 1/2 | 1 | 1 | 1 | 1 | 1/2 | 1 | 7 | 3 |
| 4 | ԱՐՍԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ | 1/2 | 0 | 1 | | 1 | 1 | 1/2 | 1/2 | 1/2 | 1 | 1/2 | 0 | 6,5 | 4 |
| 5 | ԳԱԲՐԻԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ | 1/2 | 1 | 1 | 0 | | 1 | 1/2 | 0 | 0 | 1 | 1/2 | 1/2 | 6 | 5 |
| 6 | ԱՐԱ ՄԻՆԱՍՅԱՆ | 0 | 1/2 | 1/2 | 0 | 0 | | 1/2 | 1/2 | 1/2 | 1 | 1 | 1 | 5,5 | 6 |
| 7 | ՏԻԳՐԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ | 0 | 0 | 0 | 1/2 | 1/2 | 1/2 | | 1 | 1 | 0 | 1/2 | 1 | 5 | 7 |
| 8 | ԱՇՈՏ ՆԱԴԱՆՅԱՆ | 0 | 0 | 0 | 1/2 | 1 | 1/2 | 0 | | 1 | 0 | 1 | 1 | 5 | 8 |
| 9 | ՍՄԲԱՏ ԼՊՈՒՏՅԱՆ | 1/2 | 1/2 | 0 | 1/2 | 1 | 1/2 | 0 | 0 | | 1/2 | 1 | 0 | 4,5 | 9 |
| 10 | ՎԱՐՈՒԺԱՆ ՅԱԿՈԲՅԱՆ | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 1 | 1/2 | | 1/2 | 1/2 | 4,5 | 10 |
| 11 | ՄԵԼԻՔՍԵԹ ԽԱՉԻՅԱՆ | 1/2 | 0 | 1/2 | 1/2 | 1/2 | 0 | 1/2 | 0 | 0 | 1/2 | | 1/2 | 3,5 | 11 |
| 12 | ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՏԻԿՈԶՅԱՆ | 0 | 0 | 0 | 1 | 1/2 | 0 | 0 | 0 | 1 | 1/2 | 1/2 | | 3,5 | 12 |

Իր հաջող խաղով ջերմ խոսքերի է արժանի նաեւ Գաբրիելի հասակակիցը՝ Վարուժան Հակոբյանը:

Ցավոք, վատ մարզավիճակում էր երկրի անցյալ տարվա չեմպիոնը՝ Սմբատ Լպուտյանը: Կարծում ենք, որ սա միայն մի դրվագ էր փորձառու գրոսմայստերի մարզական կենսագրությունում, եւ արդեն հաջորդ մրցաշարում Լպուտյանը իր սովորական խաղը ցույց կտա:

*Մրցաշարի կանոնադրության համաձայն, հավասար միավորների դեպքում առավելությունը որոշվում է հերթական կերպ. հանվում են մրցաշարում վատագույն արդյունք ցույց տված մասնակցի (մասնակիցների) հետ հանդիպումների արդյունքները: Եթե դա չի օգնում, հանվում են հաջորդ միավորային խմբի հետ պարտիաների արդյունքները, եւ այսպես շարունակ:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ 59-ՐԴ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՒՄԲ

# ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏՈՒՐ, 26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1999 Թ.

| | |
|---|---|
| Եղիազարյան - Սարգսյան | 1-0 |
| Ասրյան - Արա Մինասյան | 1-0 |
| Մատիկոզյան - Խաչիյան | 1/2 |
| Վար. Հակոբյան - Նալբանդյան | 1-0 |
| Արոնյան - Լպուտյան | 1/2 |
| Արտ. Մինասյան - Նազանյան | 1-0 |

## № 61. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ - ՍԱՐԳՍՅԱՆ

[B50]

**1.e4 c5 2.♘f3 d6 3.c3 ♘f6 4.♗e2 g6 5.0–0 ♗g7 6.♖e1 0–0 7.♗f1 ♘c6 8.h3 e5 9.d3 d5 10.ed5 ♘d5 11.♘a3 ♖e8 12.♘c4 ♗f5 13.♕b3 ♘b6 14.♘g5 ♗e6 15.♘e6 ♖e6 16.♗e3 ♗f8 17.♖ad1 ♕c7 18.g3 ♖d8 19.♗g2 ♘c4 20.♕c4 b6 21.a3 ♘e7 22.h4 ♕d7 23.♗h3 f5**



**24.♗f4 b5 25.♕a2 ♘c6 26.♗e5 c4 27.♗f4 ♖e1 28.♖e1 ♕d3 29.♗f1 ♕d7 30.a4 a6 31.b3 ♗g7 32.ab5 ab5 33.bc4 bc4 34.♕c4 ♔h8**



Արծաթե մեդալակիր Լևոն Արոնյանը:

**35.♗g2 ♖c8 36.♕b5 h6 37.c4 ♔h7 38.♗d5 ♘b8 39.♕b1 ♕a7 40.h5 1–0**

## № 62. ԱՍՐՅԱՆ - Արա ՄԻՆԱՍՅԱՆ

[B92]

**1.e4 c5 2.♘f3 d6 3.d4 cd4 4.♘d4 ♘f6 5.♘c3 a6 6.♗e2 e5 7.♘b3 ♗e7 8.0–0 ♗e6 9.f4 ♕c7 10.f5 ♗c4 11.a4 ♘bd7 12.a5 h6 13.♗e3 0–0 14.♔h1 ♖fc8 15.♗c4 ♕c4 16.♕f3 ♕c6 17.g4 ♘h7 18.♘c1 ♗g5 19.♘d3 ♗e3 20.♕e3 ♘df6 21.♖g1 d5 22.♘b4 ♕d6 23.♘bd5 ♘d5 24.♘d5 ♖c2 25.♖ad1 ♖e8 26.h4 ♕c5 27.♕c5 ♖c5 28.g5 hg5 29.hg5 g6 30.f6 ♖c2 31.b4 ♔h8 32.♘e7 ♖c4 33.♖g4 ♖d4 34.♖d4 ed4 35.♔g2 ♖d8 36.♔f2 d3 37.♘d5 ♖e8 38.♔e3 ♖e5 39.♔d3 ♖g5 40.♖g5 ♘g5 41.e5 ♘e6 42.♔e4 ♔g8 43.♘e7 ♔f8 44.♘c8 ♘d8 45.♘d6 ♘c6 46.♘b7 ♘b4 47.♘c5 ♔e8 48.♔d4 g5 49.♔e4 ♘c6 50.♔d5 g4**



**51.♔c6 g3 52.♘a6 g2 53.♘c7 1–0**

## № 63. ՄԱՏԻԿՈԶՅԱՆ - ԽԱՉԻՅԱՆ

[B30]

**1.e4 c5 2.♘c3 ♘c6 3.♘f3 g6 4.♗c4 ♗g7 5.0–0 d6 6.♖e1 ♘f6 7.d4 cd4 8.♘d4 0–0 9.♗b3 ♘d4 10.♕d4 ♘d7 11.♕d1 ♘c5 12.♗g5 ♗e6 13.♘d5 ♗d5 14.ed5 ♖e8 15.c3 ♕d7 16.♗c2**



**16...b5 17.♕f3 a5 18.a3 ½–½**

## № 64. Վար. ՀԱԿՈԲՅԱՆ - ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

[E61]

**1.d4 g6 2.c4 ♗g7 3.♘c3 d6 4.♘f3 ♘f6 5.♗g5 0–0 6.e3 ♘bd7 7.♕c2 c6 8.♗e2 e5 9.0–0 ed4 10.♘d4 ♘c5 11.♗h4 a5 12.♖fd1 a4 13.♗g3 ♖e8 14.♗f3 ♗g4 15.♗g4 ♘g4 16.♘f3**



Հայաստանի առաջնության հաջող անցկացմանը մեծապես նպաստեց ՀՀ ազգային անվտանգության նախարար, Հայաստանի շախմատային ֆեդերացիայի հոգաբարձուների խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանի աջակցությունը:

## ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Այսօր, հոկտեմբերի 27-ին, Տ. Պետրոսյանի անվան Հայաստանի շախմատիստի կենտրոնական տան դահլիճում, որտեղ ընթանում էր երկրի առաջնությունը, կկայանա մրցաշարի փակման հանդիսավոր արարողությունը:

Երեք մրցանակակիրներին, առաջին անգամ Հայաստանի առաջնությունների պատմության ընթացքում, կհանձնվեն ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներ:

Իրենց տերերին կգտնեն նաև դրամական մրցանակները, որոնց մանրամասները ներկայացված էին ՇՀ-ի №38-ում: Շնորհակալությամբ ցանկանում ենք ընդգծել, որ մրցանակները սահմանվել էին Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարության օժանդակությամբ: